

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2012

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2011 թվականին կատարված  
աշխատանքների մասին**

2011 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր երկարաժամկետ ու կայուն տնտեսական աճի ապահովմանը՝ գույառաբար իրականացնելով զարգացմանն ուղղված արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները և առաջնահերթ միջոցառումները:

2011 թվականի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 135.5 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճ 9.1 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2011 թվականի արդյունքներով կազմել է 936.1 հազ. դրամ՝ 2010 թվականի 823.2 հազ. դրամի դիմաց:

Ցուցանիշը	2007	2008	2009	2010	2011
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	70791	87148	102339	118187	135499
ՀՆԱ-ի իրական աճ (%)	8.8	14.3	13.1	5.5	9.1
ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	510.0	623.1	723.7	823.2	936.1

Հաշվետու տարվա պետական բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշներն ամբողջությամբ ապահովվել են՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 8.2 տոկոսով, և կազմել են 25,756.4 մլն դրամ, ինչը հնարավորություն է ստեղծել ժամանակին և ամբողջությամբ կատարել 2011 թվականի պետական բյուջեով ստանձնված ծախսային և առաջին հերթին՝ սոցիալական պարտավորությունները: Հաշվետու տարում հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 17,097.9 մլն դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 10.4 տոկոսով: 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 67,377.0 մլն դրամ, կամ 2010 թվականի նկատմամբ 8.4 տոկոսով ավելի:

2011 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարության գործունեությունն ուղղված էր ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառնությունների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ.

**Բյուջետային քաղաքականություն**

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

«ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն՝ աշխատանքներ են տարվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիֆիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2011 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների վերաբերյալ:

ԼՂՀ վարչապետի 2011 թվականի մարտի 25-ի «ԼՂՀ 2012 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 60-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները: Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2012 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, բնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

ա/ պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

բ/ Ստեփանակերտի քաղաքապետարանից և շրջանների տարածքում տեղաբաշխված համայնքներից ստացված ԼՂՀ պետական բյուջեից դոտացիա ստանալու 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

գ/ ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված բնապահպանական և բնօգտագործման վճարների,

պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել են «ԼՂՀ 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», «ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծն ու նախագծի բացատրագիրը և ներկայացվել ԼՂՀ կառավարության քննարկմանը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում, պատգամավորական խմբակցություններում «ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը:

Մշակվել է «ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որը հիմնականում պայմանավորված էր առաջնային ու ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք օբյեկտների կառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ: Նշված օրենքով պետական բյուջեի ծախսերն ավելացվել են 5,200.0 մլն դրամով և կազմել 69,914.2 մլն դրամ:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ու «ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ կառավարության թվով 15 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից ԼՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով ԼՂՀ կառավարության որոշումներով բյուջետային միջոցների վերաբաշխումների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ Նախագահի հրամանագրի, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող

բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ զուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացված զուտ շահույթի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծ:

Մշակվել է «ԼՂՀ կառավարության 2006 թվականի մարտի 28-ի «Բաժնետիրական ընկերություններում պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց ԼՂՀ պետական բյուջե շահութաբաժինների վճարման գործընթացում բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N 165 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 15-ի թիվ 57-Ն որոշմամբ: Որոշմամբ հստակեցվել են ԼՂՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների տարեկան չափերը սահմանող ԼՂՀ կառավարության որոշման ընդունման գործընթացը, գործընթացում ներգրավված կողմերի պարտականությունները:

ԼՂՀ ֆինանսների նախարարության ամենօրյա ուշադրության և հսկողության կենտրոնում են գտնվել արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և հրատապ ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված ֆինանսավորման գործընթացները:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամսյա հաշվետվություններ:

### **Գանձապետական համակարգ**

2011 թվականին գանձապետական համակարգի ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության աշխատանքներն ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաչափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառնությունների իրականացմանը:

Ամբողջ ծավալով և առանց ուշացումների վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 441 իրավաբանական անձանց (47 պետական կառավարման մարմին, 228 տեղական ինքնակառավարման մարմին, 22 այլ բյուջետային հիմնարկ, 132 պետական ոչ առևտրային կազմակերպություն և 12 փակ բաժնետիրական ընկերություն) 5840 գանձապետական հաշիվներով, որից 1541՝ պետական բյուջեի, 4138՝ համայնքային բյուջեների, 161՝ արտաբյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը.

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել կատարումը վերջիններիս կողմից.

➤ պատրաստվել է ամենօրյա և ամսական տեղեկատվություն պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորման մասին.

➤ կազմվել է ամենամսյա տեղեկատվություն ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին ըստ ֆինանսավորման (տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ) և սահմանված ժամկետում ներկայացվել ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը.

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցման ուղղությամբ.

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկություններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են 2010 թվականի պետական բյուջեի, 2011 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա պետական բյուջեի (նախահաշվի) կատարման հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԼՂՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները, պատրաստվել են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի «ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը (հավելվածներով) և դրանք սահմանված ժամկետում ներկայացվել են ԼՂՀ կառավարության հաստատմանը.

➤ մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովներում ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկումներին.

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԼՂՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մամուլում հրապարակման համար.

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հողվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 284 գրություն՝ ծախսերի հողվածային փոփոխություն կատարելու

խնդրանքով, որոնցից բավարարվել են 249-ը.

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 32 գրության հիման վրա նրանց կողմից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները.

➤ կատարվել է քաղաքացիների ընդունելություն՝ հիմնականում նրանց կողմից պետական և համայնքային բյուջեներ, իրավաբանական անձանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց սխալմամբ կամ ավել վճարած, ինչպես նաև ծառայությունների կատարումը մերժելու դեպքում պետական տուրքի գումարի վերադարձման հարցերով: Ընդունվել է 72 դիմում, որոնք լրիվությամբ բավարարվել են.

➤ 2011 թվականի դեկտեմբերի 19-ին հիրավիրվել է խորհրդակցություն շրջանների գանձապետական բաժինների պետերի մասնակցությամբ, որտեղ քննարկվել են պետական և համայնքային բյուջեների կատարման, ինչպես նաև մինչև տարեվերջ սպասվելիք՝ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի արդյունքները:

### **Ֆինանսական վերահսկողություն**

ԼՂՀ կառավարության 2011 թվականի հունվարի 25-ի N 12-Ն որոշման համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության վարչությունը վերակազմավորվել է ֆինանսական վերահսկողության տեսչության՝ առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 98 իրավաբանական անձանց՝ բյուջետային հիմնարկությունների և տնտեսվարող սուբյեկտների մոտ, այդ թվում՝ 21 բյուջետային հիմնարկներում, 40 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 13 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 5 ոչ պետական ձեռնարկություններում, 10 հասարակական կազմակերպություններում, 2 քաղաքային և 7 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել են 298,785.0 հազ. դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ: Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 41,077.7 հազ. դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները՝ 1,081.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 1,959.1 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա գումարները՝ 5,444.5 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 13,893.2 հազ. դրամ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները՝ 164.8 հազ. դրամ և ավելցուկը՝ 235,164.5 հազ. դրամ:

2011 թվականին ընդամենը վերականգնվել/վերաձևակերպվել է 275,391.8 հազ. դրամի

գումար, որից պետական բյուջե՝ 26,616.3 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 506.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 946.0 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցված գումար՝ 5,444.5 հազ. դրամ և հաշվառումով վերաձևակերպված գումար՝ 241,878.8 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով ութ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն և մեկ հիմնարկ-ձեռնարկության նյութերը՝ ԼՂՀ գլխավոր դատախազություն:

### **Հաշվապահական հաշվառում և աուդիտ**

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2011 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների անցկացմանը:

Հաշվետու տարում մշակվել են հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

- «Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքը,

- «Աուդիտորական գործունեության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքը,

- «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումը,

- «ԼՂՀ կառավարության 2006 թվականի հունվարի 15-ի «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին» N 15 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումը,

- «Աուդիտորների որակավորման նպատակով մասնագիտացված կառույցների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումը,

- «ԼՂՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի մայիսի 21-ի «ԼՂՀ-ում աուդիտորների որակավորման քննությունների հարցերը (թեստերը) և տիպային խնդիրները հաստատելու մասին» թիվ 74 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանը,

- «ԼՂՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի մարտի 27-ի «ԼՂՀ-ում հաշվապահների որակավորման քննությունների հարցերի (թեստերի) ցանկը (հարցաշարը), ծրագիրը, որի շրջանակներում կազմվելու են հարցաթերթիկում ներառվող խնդիրները, քննությունների ընթացքում օգտվելու համար թույլատրվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը հաստատելու



մասին» թիվ 42 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանը,

- «Աուդիտորի վարքագծի կանոնները հաստատելու մասին» ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանը,

- «Աուդիտորների որակավորման քննության հարցաթերթիկում ներառված խնդիրների գնահատման չափանիշները հաստատելու մասին» ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանը:

Հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների հարցաթերթիկներում ներառվող թեստերն ամբողջությամբ համապատասխանեցվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

2011 թվականին կազմակերպված հաշվապահների որակավորման 3 քննությունների արդյունքներով որակավորվել է 1 հաշվապահ, իսկ աուդիտորների որակավորման 2 քննությունների արդյունքներով՝ 4 աուդիտոր:

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ-ում ուժի մեջ էր 4 հաշվապահի և 4 աուդիտորի որակավորման վկայական:

Տարվա ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը հետևողականորեն իրականացրել է հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ, որոնց շրջանակներում հաշվետու տարում մամուլում հրապարակվել են պարզաբանումներ այն հիմնական մոտեցումների մասին, որոնք պետք է հաշվի առնվեն հաշվապահների կողմից վարձու աշխատողներին տրվող ապահովագրական նպաստների հաշվարկման և վճարման ժամանակ:

Նախարարության կողմից 2011 թվականի ընթացքում սեմինար-խորհրդակցություններ են կազմակերպվել ԼՂՀ առողջապահության ու ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունների, դրանց ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ԼՂՀ Մարտունու և Մարտակերտի շրջանների համայնքների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են ամենամյա նվազագույն, երկարացված և լրացուցիչ արձակուրդների տրամադրման կարգը, արձակուրդից հետևանքալից դեպքերը, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի վարման, խրախուսման ֆոնդի միջոցների օգտագործման կարգերը, ապահովագրական նպաստների հաշվարկման կարգը, ինչպես նաև նշված ոլորտների գործունեության հետ կապված հաշվառման առանձնահատկությունները և հաշվապահներին հուզող մի շարք այլ հարցեր:

ԼՂՀ Մարտունու և Մարտակերտի շրջանների հանրակրթական դպրոցների տնօրենների հետ անցկացված սեմինար-խորհրդակցությունների ընթացքում պարզաբանվել են ամենամյա, ուսումնական և չվճարվող արձակուրդների տրամադրման, անձնական գործերի վարման, հրամանագրքերի և հրամաններից քաղվածքների լրացման, փոխարինման մատյանների վարման կարգերը և մի շարք այլ հարցեր:

Մշակվել են կենտրոնական գանձապետարան և տեղական գանձապետական բաժիններ

ներկայացվող ֆինանսավորման հայտերի և դրանց կից ներկայացվող տեղեկանքների՝ հաշվապահական հաշվառման գործող օրենսդրությանը համապատասխան օրինակելի ձևեր և ներկայացվել դրանց լրացման ցուցադրական օրինակներ:

**Գնումների գործընթացի կարգավորում**

2011 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից.

- ստուգվել, հաշվառվել և ծանուցում է տրվել մոտ 850 գնման հաշվետվությունների,

- ուսումնասիրվել և հաշվառվել են պետության կարիքների համար 2011 թվականին իրականացվող գնումների անվանացանկում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 169 առաջարկություններ, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ թվով 67 գրություններ,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման և անցկացման գործընթացի շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել են գնումների էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրում հրապարակման ենթակա նյութեր,

- ստուգվել և ամփոփվել են պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված 2012 թվականի գնումների պլանները:

2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված՝ «Գնումների մասին» ԼՂՀ նոր օրենքը, որով գնումների հետ կապված հարաբերությունների կարգավորման համար նախատեսվել են առավել արդիական և լիարժեք մեխանիզմներ: Նշված օրենքի համաձայն ԼՂՀ գնումների համակարգն ամբողջությամբ ապակենտրոնացվել է՝ գնումների կազմակերպման և պայմանագրերի կնքման լիազորությունները վերապահվել են այն մարմիններին, որոնց կարիքների համար կատարվում են գնումները, իսկ Պետական գնումների գործակալությունը վերափոխվել է Գնումների աջակցման կենտրոնի:

Մշակվել և ԼՂՀ կառավարություն է ներկայացվել «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը», որը հաստատվել է ԼՂՀ կառավարության 2011 թվականի մարտի 22-ի թիվ 133-Ն որոշմամբ: Կարգով սահմանվել են գնումների գործընթացի պատասխանատուները, գնումների պլանավորման, նախապատրաստման, պայմանագրի կնքման և կատարման ու գնումների ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև նոր օրենքով նախատեսված գնման ձևերի կիրառման ընթացակարգերը:

Մշակվել և ընդունվել են ԼՂՀ ֆինանսների նախարարի՝ «Գնումների մասին» ԼՂՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի պահանջներից բխող թվով երեք նորմատիվ բնույթի հրամաններ:

Գնումների նոր համակարգի ներդրման և օրենքի ու ենթաօրենսդրական ակտերի

պահանջների պարզաբանման նպատակով ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից պատվիրատուների համար տարվա ընթացքում կազմակերպվել են 10-ից ավելի սեմինար-խորհրդակցություններ՝ ընդհանուր առմամբ ավելի քան 270 մասնակիցներով: Մշակվել և պատվիրատուների՝ գնումների գծով պատասխանատու աշխատողներին են տրամադրվել օրենքով նախատեսված գնման նոր ձևերի համար օրինակելի փաստաթղթերի փաթեթներ: «Գնումների մասին» ԼՂՀ օրենքի վերաբերյալ առաջացող հարցերին արագ արձագանքման նպատակով ստեղծվել է «թեժ գիծ»:

ԼՂՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի օգոստոսի 31-ի N 79 հրամանի համաձայն՝ Գնումների աջակցման կենտրոնի աշխատողների մասնագիտական պատրաստվածության աստիճանի բացահայտման, ինչպես նաև գնումների մասին օրենսդրության իմացության մակարդակի բարձրացման նպատակով 2011 թվականի սեպտեմբերի 12-ին անցկացվեց ատեստավորում: Աշխատողների գերակշռող մասի ատեստավորման արդյունքները դրական էին: Բացասական արդյունքներով աշխատողները կվերաստեստավորվեն 2012 թվականի ընթացքում:

Ընդհանուր առմամբ, 2011 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից կատարված գնումների ծավալը (բացառությամբ գնումների բազային միավորը չգերազանցող, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված և պետական գաղտնիք պարունակող գնումների) կազմել է 14,640.0 մլն ՀՀ դրամ, որից 10,912.3 մլն ՀՀ դրամը (74.5 %)՝ մրցակցային հիմունքներով կատարված գնումներն է: Մրցակցային հիմունքներով կատարված գնումների իրականացումն ապահովել է հատկացված միջոցների տնտեսում 225.7 մլն դրամի կամ հատկացված գումարի 2.0 տոկոսի չափով:

### **Ապահովագրություն և ֆինանսական շուկայի զարգացում**

ԼՂՀ-ում կենսաթոշակային բարեփոխումների նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ԼՂՀ կառավարության պատվիրակությունը մասնակցել է 2011 թվականի մայիսի 25-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպված՝ կենսաթոշակային բարեփոխումներին նվիրված քննարկմանը, որին հրավիրված էր Չիլիի մասնավոր կենսաթոշակային համակարգի հիմնադիր, դոկտոր Խոսե Պինիերան: ԼՂՀ պատվիրակության կազմում էր նաև ԼՂՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը:

ԼՂՀ վարչապետի նախաձեռնությամբ և ԼՂՀ ֆինանսների նախարարության աջակցությամբ 2011 թվականի հունիսի 11-ին ք. Ստեփանակերտում կազմակերպվեց քննարկում՝ նվիրված բժշկական պարտադիր ապահովագրության ներդրման հիմնահարցերին, որին մասնակցել են ՀՀ կենտրոնական բանկի, ԼՂՀ ֆինանսների և ԼՂՀ առողջապահության նախարարությունների ներկայացուցիչներ: Քննարկման շրջանակներում ներկայացվեցին նաև զարգացած երկրներում գործող բժշկական ապահովագրության համակարգերը:

ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից ամփոփվել են որպես պարտադիր ապահովագրության առաջին տեսակ ԼՂՀ-ում 2011 թվականից ներդրված ավտոտրանսպորտային

միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի մեկ տարվա գործունեության արդյունքները: Հաշվետու տարում ԼՂՀ տարածքում ԱՊՊԱ ոլորտում գործունեություն են ծավալել Հայաստանի Հանրապետության 8 ապահովագրական ընկերություններ՝ 29 իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող գործակալների միջոցով: 2011 թվականին ապահովագրվել է ավելի քան 13.0 հազ. ավտոմեքենա: Այդ ընթացքում շուրջ 580 ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացվել է մոտ 90.0 մլն դրամի չափով գույքային և անձնական վնասների հատուցում:

2011 թվականի հուլիսի 30-ին ԼՂՀ-ում կազմակերպվել է «ԱՊՊԱ համակարգի ներդրման գործընթացի խնդիրները Լեռնային Ղարաբաղում» խորագրով սեմինար-քննարկում, որին մասնակցել են ՀՀ կենտրոնական բանկի, Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի, ԼՂՀ ֆինանսների և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, ԼՂՀ ճանապարհային ոստիկանության և ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչները:


Սեմինար-քննարկումը նվիրված էր ԱՊՊԱ ոլորտում հատուցման գործընթացի կազմակերպման հիմնական սկզբունքներին, գույքային վնասների գնահատման մեթոդաբանությանը, տուժողների առողջությանը պատճառված վնասների վերականգնման հետ կապված հատուցումների կարգավորման գործընթացին: Սեմինարի ընթացքում քննարկվել են ԼՂՀ-ում ԱՊՊԱ գործընթացի բոլոր փուլերում առկա բարդություններն ու խնդիրները, հատկապես ակտիվ քննարկման են արժանացել ԱՊՊԱ ոլորտում տուժողների առողջության վերականգնման ընթացքում ԼՂՀ բուժհաստատությունների և ապահովագրական ընկերությունների միջև ծագած խնդիրները:

ԼՂՀ-ում գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության ներդրման ծրագրի մշակման աշխատանքների համակարգման նպատակով ԼՂՀ վարչապետի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N 286-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ ԼՂՀ ֆինանսների նախարարի գլխավորությամբ: Հանձնաժողովի առաջին նիստի ժամանակ քննարկվել են ԼՂՀ-ում մշակաբույսերի ապահովագրության ծրագրի մշակմանն ու հետագա իրականացմանն ուղղված մի շարք հարցեր: Ծրագրի նախապատրաստման շրջանակներում ընթացքի մեջ են ԼՂՀ գյուղատնտեսության ոլորտը բնութագրող անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման և վերլուծման աշխատանքները:

### **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար**

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԼՂՀ օրենսդրության համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2011 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 135 հաշվետվություն, որոնք վերաբերում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետվությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է գծապատկերում:

Նոտարներ, 71



**Գծապատկեր.** Ներկայացված հաշվետուությունների քանակը ըստ հաշվետու անձանց տեսակների (հատ)

**Լիցենզավորման գործընթաց**

Լիցենզավորման մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում է «Աուդիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում» և «Շահումով խաղերի կազմակերպում» գործունեության տեսակների լիցենզավորում:

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ էր թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման 2 լիցենզիա: 2010 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն ԼՂՀ տարածքում «Թանկարժեք մետաղների գտարկում, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն» և «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշում» գործունեության տեսակների լիցենզավորումը վերապահվեց Հայաստանի Հանրապետության լիազորած պետական մարմնին: Ելնելով օրենսդրական պահանջներից՝ նշված գործունեության տեսակով զբաղվող լիցենզավորված կազմակերպությունները դադարեցրել են լիցենզիաների գործունեությունն իրենց դիմումների համաձայն:

Հաշվետու տարում ներկայացվել է աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու համար 1 հայտ, որը ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից բարդ ընթացակարգով լիցենզավորման հանձնաժողովի կայացրած որոշման համաձայն բավարարվել է:

Լիցենզավորման աշխատանքների շրջանակներում 2011 թվականի ընթացքում նախարարության կողմից.

- միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար,
- ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների և գանձված պետական տուրքի վերաբերյալ,

- կազմակերպվել են ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից բարդ ընթացակարգով լիցենզավորման հանձնաժողովի 3 նիստեր, որոնք նվիրված էին «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում» գործունեության տեսակի լիցենզիա ունեցող սուբյեկտների դիմումների ուսումնասիրման և լիցենզիաների գործողության դադարեցման, ինչպես նաև «Աուդիտորական ծառայությունների իրականացում» գործունեության տեսակի լիցենզիայի տրամադրման հարցերի քննարկմանը:

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ է աուդիտորական ծառայությունների իրականացման 1 լիցենզիա:

**Փաստաթղթաշրջանառություն, իրավաբանական ծառայություն և կադրային գործընթաց**

2011 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 3512 փաստաթուղթ, որից 32-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթղթերը քննարկվել, ընթացքավորվել են և անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 175 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

ԼՂՀ օրենքներ	-	6
ԼՂՀ Նախագահի հրամանագրեր	-	1
ԼՂՀ կառավարության որոշումներ	-	113
ԼՂՀ վարչապետի որոշումներ	-	46
ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամաններ	-	9

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել է դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Նախարարությունը միշտ ուշադրության կենտրոնում է պահել բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը՝ նախարարության աշխատողների կողմից մշտապես իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում՝ ավելի քան հազար ընդունելություն): Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լավել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով մամուլում պարբերաբար հրապարակվել են հաղորդագրություններ:

Նախարարության գործունեության առանձին ոլորտների լուսաբանման գործընթացի արդյունավետության բարձրացման, քաղաքացիների հետ հետադարձ կապի ապահովման ու

ծառայությունների մատուցումն առավել դյուրին դարձնելու նպատակով բացվել է նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջը՝ «www.minfin.nkr.am» հասցեով: Կայքէջը պարունակում է տեղեկատվություն նախարարության գործունեության հիմնական ոլորտների մասին, հայտարարություններ և վիճակագրական տվյալներ, նորություններ և պաշտոնական հաղորդագրություններ: Կայքէջի միջոցով իրականացվում են գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրի հրապարակման, ինչպես նաև մշակված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները:

Կադրային ոլորտում նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին ԼԳՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և փորձի բարձրացմանը: Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար տարվա ընթացքում կազմակերպվել է 18 մրցույթ: Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ: